ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Մեքլենբուրգ-Ֆորփոմեր նահանգի միջեկեղեցական խորհրդի և այդ խորհրդի նախագահ փիկին Գյոբելի հրավերով հունիսի 15-ին Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը այցելել է տեղի հայ ապաստանյալներին՝ ընկերակցությամբ Գերմանիայի թեմի առաջնորդարանի դպրապետ Վարուժան Մարգարյանի, Գրաֆսվալդ քաղաքում մատուցել Ս. Պատարագ, դասախոսություն է կարդացել՝ «1700-ամյա Հայ Եկեղեցին» թեմայով:

Հաջորդ օրը պրն Արման Մնացականյանի ջանքերով կազմակերպվել է համերգ «Հայ աշխարհիկ-ժողովրդական և հոգևոր երաժշտությունը»՝ մասնակցությամբ Հայկ Դեհյանի, Սաթենիկ Մկրտումյանի և Վարուժան Մարգարյանի: Համերգին հաջորդել է Տ. Սերովբե վրդ. Իսախանյանի դասախոսությունը «Հայ Եկեղեցին, նրա անցյալը և ներկան» թեմայով:

Երկօրյա հանդիպմանը իրենց խոսքն են ասել Տ. Գարեգին եպս. Բեքչյանը, Տ. Արմաշ աբեղան, դոկտ. Կարլ Պենկերան, պրոֆ. Թեոլեն, Հանս Քլաութքեն:

«Հայաստանը և հայ մշակույթը» բաժնում ցուցադրվել է մի տեսաժապավեն, որտեղ գերմաներեն ներկայացվել է Հայաստանն իր անցյալով ու ներկայով: 2001 թ. նախատեսվում է հաջորդ հանդիպումը նոր նյութերով հարստացած: